ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

11 հունիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

74
(3283)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՞

ՀՀ դատախազությունը երեկ պաշտոնապես տեղեկացրեց, որ «դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Գ. Ծ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ առանձնապես խոշոր չափերով հարկերից խուսափելու մեղադրանքով»: Նույն օրը Գագիկ Ծառուկյանն ու նրա կինը պատրաստվում էին եռօրյա այցով մեկնել արտերկիր: Սակայն օդանավակայանի VIP սրահում նրանց տեղեկացվել է, որ առկա է խնդիր, որի պատճառով չեն կարող լքել երկիրը: Դրանից հետո Ծառուկյանները հրաժարվել են նախատեսված այցից եւ վերադարձել տուն:

Սակայն ստեղծված իրավիճակում կա մի կարեւոր հանգամանք: Բանն այն է, որ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու, հետեւաբար նաեւ որեւէ խափանման միջոց կիրառելու համար անհրաժեշտ միջնորդությունը եւ համապատասխան թույլտվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից չեն տրամադրվել դատախազությանը: Ծառուկյանը պատգամավորի թեկնածու է եւ ունի անձեռնամխելիություն: Սա նշանակում է, որ խոսքը, ամենայն հավանականությամբ, նոր քրեական վարույթի մասին չէ, այլ նախկինում հարուցված քրեական գործի շրջանակում իրականացվող գործընթացի, որի վերաբերյալ տեղեկությունը պաշտոնապես հրապարակվել է միայն այժմ:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել է ՀՀ գլխավոր դատախազությունից պարզել, թե հարկերից խուսափելու վերաբերյալ քրեական վարույթը կոնկրետ երբ է հարուցվել: Սակայն դատախազությունից պատասխանել են. «Այն, ինչ այս պահին կար հրապարակման ենթակա, ասել ենք, մնացած հարցերը՝ գրավոր»: Դիմել ենք:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարում Արթուր Ավանեսյանի՝ Կանադայի դեմ հարուցված քրեական գործով եւ այն ուղարկում է դատարան: Հիշեցնենք, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Արթուր Ավանեսյանը կալանավորվել է երկու ամսով: Արթուր Ավանեսյանին մեղադրում են ընտրակաշառք տալու մեջ: Նրա փաստաբանները հայտնել են, որ նա չի ընդունում մեղադրանքները: Հակակոռուպցիոն կոմիտեն էլ իր հերթին հայտնել էր, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի եւ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից համատեղ ձեռնարկված ապացուցողական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության համակիրը 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններին իրենց օգտին քվեարկելու դիմաց մի շարք ընտրողների աշխատանքի ընդունելու եւ այլ եղանակով խոստացել է տալ կաշառք, որն ընդունվել է վերջիններիս կողմից: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախաձեռնվել է քրեական վարույթ, հանրային քրեական հետապնդում էր հարուցվել նաեւ չորս անձի նկատմամբ:

Armlur.am-ի տեղեկություններով՝ Գյումրիում կառավարման ճգնաժամը գնալով խորանում է: Բանն այն է, որ Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի կալանավորումից հետո քաղաքի ղեկավարումը փաստացի փոխանցվել է նրա փեսային՝ Ավետիս Առաքելյանին: Ինչպես արդեն հայտնի է, Ավետիս Առաքելյանը «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի ցուցակով մասնակցել է խորհրդարանական ընտրություններին: Նա նախընտրական ցուցակում զբաղեցնում է 8-րդ հորիզոնականը, եւ պատգամավորական մանդատը ստանձնելու դեպքում քաղաքի կառավարման հարցը կրկին մնում է անորոշ: Նշենք, որ նախօրեին Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստի ընթացքում հայտարարել էր, որ Գյումրիում հնարավորինս արագ պետք է անցկացվեն արտահերթ ընտրություններ: Armlur.am-ի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ իշխանությունները դեռեւս չեն հստակեցրել ընտրությունների անցկացման ժամկետները, սակայն հակված են Գյումրու քաղաքապետի պաշտոնում կրկին առաջադրել Սարիկ Մինասյանին: Ի դեպ, Սարիկ Մինասյանը նույնպես պատրաստվում է ստանձնել պատգամավորական մանդատը եւ ժամանակավորապես աշխատել Ազգային Ժողովում, մինչեւ իշխանությունները վերջնական որոշում կայացնեն արտահերթ ընտրությունների վերաբերյալ:



Իրանը չորեքշաբթի առավոտյան հրթիռային հարվածներ է հասցրել Հորդանանի, Քուվեյթի եւ Բահրեյնի ուղղությամբ՝ շարունակվող լարվածության շրջանակում, որը սրվել է Հորմուզի նեղուցի շրջանում ամերիկյան ուղղաթիռի կործանումից եւ դրան հաջորդած ԱՄՆ ռազմական գործողություններից հետո: Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել է, որ արձակել է «հեռահար հրթիռներ»՝ թիրախավորելով Հորդանանում գտնվող մի շարք ռազմական օբյեկտներ, այդ թվում՝ Ալ-Ազրաք ավիաբազան եւ այնտեղ տեղակայված ամերիկյան հրամանատարական կենտրոնը: Հորդանանի զինված ուժերը հայտնել են, որ խոցել են Իրանից արձակված հինգ հրթիռ, որոնք ուղղված էին Ալ-Ազրաքի շրջանին՝ մայրաքաղաք Ամմանից մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ բեկորների անկման հետեւանքով զոհեր եւ ավերածություններ չեն գրանցվել: Միաժամանակ Քուվեյթի բանակը հայտարարել է, որ հակաօդային պաշտպանության համակարգերը ներգրավվել են «թշնամական օդային թիրախների» վնասազերծման գործողություններում, իսկ Բահրեյնի պաշտպանության ուժերը հայտնել են, որ հաջողությամբ որսացել են մի շարք հրթիռներ:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ՈՒԹ ՏԱՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼԸ ՀԵՇՏ ԲԱՆ ՉԷ»

**ArmLur.am-ը զրուցել է ՔՊ վարչության անդամ Վիլեն Գաբրիելյանի հետ (սկիզբը՝ նախորդ համարում):**

**- Պարոն Գաբրիելյան, երբ խորհրդարանում էիք, ակնհայտ էր, որ որոշ գործընկերների հետ լարված հարաբերություններ ունեիք, մասնավորապես Անդրանիկ Քոչարյանի: Հիմա ի՞նչ հարաբերություններ ունեք նրա հետ:**

- Անդրանիկ Քոչարյանի հետ լարված հարաբերություններ չեմ ունեցել: Նրան միշտ հարգանքով եմ վերաբերվել՝ նաեւ հաշվի առնելով նրա տարիքը եւ փորձը: Իհարկե, եղել են հարցեր, որոնց շուրջ համաձայն չենք եղել թե՛ բովանդակային, թե՛ իրավիճակային առումներով: Այդ հարցերը փորձել եմ քննարկել, որոշ դեպքերում արդյունքի ենք հասել, որոշ դեպքերում՝ ոչ: Այս պահին նրա հետ ունեմ սովորական աշխատանքային հարաբերություններ: Նա «Քաղաքացիական պայմանագիր» թիմի անդամ է, Ազգային Ժողովի պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նախկին նախագահը: Կրկնում եմ՝ նրա նկատմամբ հարգանք ունեմ: Ծփումներ լինում են այնքանով, որքանով աշխատանքային կամ առօրյա իրավիճակներում հանդիպում ենք:

**- Երբ ընդդիմադիր էիք, մշտապես պաշտպանում էիք այն մարդկանց, որոնք իրենց կարծիքի համար ենթարկվում էին հետապնդումների: Այսօր, երբ իշխանություն եք, ընդդիմադիր խոսքի համար մարդիկ կալանավորվում են, նրանց նկատմամբ հետապնդումներ են սկսվում: Ի՞նչ կասեք դրա մասին:**

- Եթե նկատի ունեք Արթուր Օսիպյանի դեպքը, ապա կարող եմ ասել, որ նրա նկատմամբ կալանավորումը անձամբ ինձ համար որոշ չափով անհասկանալի է եղել: Սակայն ազատ խոսքի մասին խոսելիս պետք է փաստերը տեսնել: Այսօր ցանկացած քաղաքացի կարող է մոտենալ վարչապետին եւ իր կարծիքը հայտնել: Օրինակ՝ Արթուր Օսիպյանը հնարավորություն է ունեցել անմիջականորեն հարց ուղղել վարչապետին: Դուք պատկերացնո՞ւմ եք՝ նախկինում հնարավոր կլինե՞ր այդքան մոտենալ երկրի ղեկավարին եւ քննադատական հարց տալ: Ավելին՝ նախկինում եղել են դեպքեր, երբ մարդկանց քննադատական խոսքի համար ֆիզիկական բռնության էին ենթարկում: Այդպիսի երեւույթներ այսօր չեմ տեսնում:

**- Վերջերս նաեւ Նաիրի Հոխիկյանի վրա հարձակում եղավ: Ի՞նչ կասեք այդ մասին:**

- Անկեղծ ասած, Նաիրի Հոխիկյանին ճանաչելով՝ ես խիստ կասկածում եմ նրա բազմաթիվ հայտարարությունների արժանահավատությանը: Կարծում եմ՝ քաղաքացիներն իրենք կարող են գնահատել նրա հրապարակային գործունեությունն ու հայտարարությունները:

**- Այսինքն՝ պնդո՞ւմ եք, որ այսօր Հայաստանում ազատ խոսք կա:**

- Ես չեմ ուզում պարզապես պնդել, այլ հակադարձ հարց տալ՝ իսկ չկա՞: Եթե ազատ խոսք չլիներ, ինչո՞ւ պիտի Դուք այսօր ինձ հետ այս հարցազրույցն անցկացնեիք եւ այս հարցերը տայիք: Ազատ խոսքի լավագույն օրինակներից մեկն այն է, որ քաղաքացիները կարողանում են հրապարակայնորեն քննադատել իշխանություններին: Նույնիսկ զոհված զինծառայողների հարազատները հնարավորություն են ունենում մոտենալ վարչապետին, իրենց դժգոհությունները բարձրաձայնել, երբեմն նույնիսկ բավականին կոշտ մեղադրանքներ հնչեցնել: Խնդիրն այն է, որ շատերը խառնում են ազատ խոսքի իրավունքը եւ պատասխանատվությունը: Ազատ խոսքը չի նշանակում, որ կարելի է ամեն ինչ ասել՝ առանց փաստերի կամ առանց բարեկրթության սահմանները հաշվի առնելու:

**- Երբ պատգամավորական մանդատը վայր դրեցիք, հայտարարեցիք, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը լուրջ առողջացման եւ կերպարանափոխման կարիք ունի: Ի՞նչ նկատի ունեիք: Հեղափոխությունից հետո այդ փոփոխությունները տեղի չէի՞ն ունեցել:**

- Նախ ուզում եմ հիշեցնել, որ հեղափոխության ընթացքում ես կուսակցության անդամ չէի: Այդ ժամանակ ծառայում էի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, եւ իմ կուսակցական անդամակցությունը սառեցված էր: Հետեւաբար՝ բուն հեղափոխական գործընթացին չեմ մասնակցել: Ինչ վերաբերում է իմ հայտարարությանը, ապա այո՛, ես իսկապես կարծում եմ, որ կուսակցությունը առողջացման կարիք ունի: Դա ասելուց բացի նաեւ փորձել եմ գործել այդ ուղղությամբ: Ութ տարի շարունակ իշխանություն լինելը հեշտ բան չէ: Ժամանակի ընթացքում ցանկացած կառույցի մոտ կարող են առաջանալ լճացման երեւույթներ, խնդիրներ քննարկումների մշակույթի, որոշումների կայացման գործընթացի եւ ներքին միջավայրի հետ կապված: Որպես պատգամավոր՝ հաճախ եղել են դեպքեր, երբ կարեւոր օրենսդրական նախաձեռնություններ առաջ տանելու համար ստիպված էի երկար ժամանակ տարբեր գերատեսչությունների հետ աշխատել, համոզել գործընկերներին, որ տվյալ նախագիծը կարեւոր է երկրի համար: Մենք բոլորս մարդիկ ենք: Իշխանության մեջ երկար ժամանակ գտնվելը բերում է նաեւ հոգնածության, որոշակի լճացման եւ այլ խնդիրների: Հենց այդ պատճառով էլ կարծում եմ, որ կուսակցությունը պետք է մշտապես ինքնաքննադատության եւ վերափոխման գործընթացի մեջ լինի:

*Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀԱՊԿ-ՈՒՄ ԿՔՆՆԱՐԿՎԻ

ՀԱՊԿ երկրները համաձայնել են քննարկել կազմակերպության կանոնադրության համապատասխան հոդվածը Հայաստանի նկատմամբ կիրառելու հարցը՝ երկու տարի անդամավճարները չվճարելու պատճառով,- ասել է Լավրովը: Հավելենք, որ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել 2026 թվականի նոյեմբերի 10-ին Մոսկվայում: Լավրովի խոսքով՝ անհրաժեշտ է համաձայնեցնել հանդիպման ժամանակն ու վայրը, սակայն ռուսական կողմը առաջարկում է այն անցկացնել Մոսկվայում՝ Հավաքական անվտանգության խորհրդի նիստից անմիջապես առաջ: Նախարարի առաջարկով նախատեսվում է նաեւ համատեղ նիստի ձեւաչափ, որտեղ կմասնակցեն արտաքին գործերի նախարարների խորհուրդը, պաշտպանության նախարարների խորհուրդը եւ անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտեն: Լավրովը նշել է, որ առաջարկը հանդիպման ընթացքում առարկություններ չի ստացել:

## 22,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ

2025 թվականին վարչապետի աշխատակազմի պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի շրջանակում ծախսերը կազմել են 22,5 միլիարդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 96%-ը: Այս մասին Ազգային Ժողովում, 2025 թվականի բյուջեի կատարողականի նախնական քննարկման ժամանակ ասել է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը: «Նախորդ տարվա համեմատ վարչապետի աշխատակազմի պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերն աճել են 4,2%-ով կամ 906 միլիոն դրամով»,-նշել է նա:

## ԼԱՎՐՈՎԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Հայ ժողովրդի կամքի նկատմամբ հարգանքը պետք է դրսեւորվի որքան հնարավոր է շուտ, որպեսզի իշխանությունների քաղաքական որոշումները նրան չստիպեն կանգնել փաստի առջեւ, հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: «Խոսքը Հայաստանի շահերը չհարգելու մասին չէ, այլ հայ ժողովրդի կամքը հնարավորինս արագ հարգելու մասին է, որպեսզի այս ժողովուրդը դեռեւս ունենա ընտրության հնարավորություն, այլ ոչ թե ստիպված լինի անգնել փաստի առաջ»,- ասել է Լավրովը ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստից հետո տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ: Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի (ԱԳՆԽ) նիստը կմեկնարկի հունիսի 10-ին Կազանում:

## ՀԱՄԱՐՈՒՄ Է ՈՉ ԼԵԳԻՏԻՄ

ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունիսի 7-ի Ազգային Ժողովի ընտրություններն անցել են «Ընտրական օրենսգրքի» բազմաթիվ խախտումներով եւ չեն արտացոլում ժողովրդի կամարտահայտումը: Այս մասին ասված է «Ապրելու երկիր» կուսակցության տարածած հայտարարության մեջ:

«● Քարոզարշավի ամբողջ ընթացքում եւ դրան նախորդող ամիսներին իշխանության ներկայացուցիչներն իրականացրել են ընտրողների նկատմամբ ճնշումներ՝ աշխատանքից ազատելու, ձերբակալելու եւ այլ սպառնալիքների տեսքով, հատկապես այն անձանց նկատմամբ, ովքեր կամ իրենք, կամ իրենց ընտանիքի անդամները որեւէ ձեւով ներգրավված են եղել ընդդիմադիր ուժերի ընտրական գործունեության մեջ:

● Անհիմն ձերբակալվել, կալանավորվել, երկարատեւ հարցաքննությունների են կանչվել ընդդիմադիր թեկնածուներ եւ ընտրական շտաբների պատասխանատուներ՝ նրանց ընտրական գործընթացներից դուրս մղելու նպատակով:

● Թեեւ պետական պաշտոնյաները գտնվել են արձակուրդում, քարոզարշավի ընթացքում շարունակել են հանդես գալ իրենց պաշտոնեական դիրքերից՝ անուղղակիորեն կատարելով իրենց գործառույթները:

● Հանրային հեռուստատեսությունը քարոզարշավի ընթացքում եւ դրանից առաջ իրականացրել է համակարգված հակաքարոզչություն ընդդիմադիր ուժերի նկատմամբ՝ կրկնելով իշխանական համացանցային լրատվամիջոցների հակաքարոզչական թեզերը:

● Ընտրությունների օրը բազմաթիվ տեղամասերում եւ դրանց հարեւանությամբ, իշխանության ներկայացուցիչների ներկայությամբ, ճնշում է գործադրվել ընտրողների ազատ ընտրության վրա:

Թեեւ տեղամասերում, բուն քվեարկության գործընթացը անցել է հիմնականում օրենքի շրջանակներում, սակայն, համաձայն մեր վերլուծությունների եւ գնահատականների, ընտրություններին մասնակցող քաղաքացիներից առնվազն 130.000-ը իշխող կուսակցությանն ընտրել է պարտադրված՝ խուսափելով անձնական, ֆինանսական, սոցիալական, հոգեբանական եւ այլ խնդիրներից:

Նշված խախտումներն արձանագրել է նաեւ ԵԱՀԿ դիտորդական առաքելությունը: Վերոնշյալն ունեցել է էական ազդեցություն ընտրությունների արդյունքների վրա: Ազատ ու արդար ընտրությունների պարագայում իշխող կուսակցությունը չէր կարողանալու ստանալ մանդատների մեծամասնությունը: Այսպիսով, «Ապրելու երկիր» կուսակցությունն ընտրությունների արդյունքների հիման վրա ձեւավորվող կառավարությունը համարում է ոչ լեգիտիմ»:

## ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարել է, որ տարածաշրջանում հարվածներ է հասցրել ԱՄՆ ռազմական բազաներին՝ ի պատասխան ավելի վաղ իրականացված ամերիկյան գործողությունների: ԱՄՆ-ի կողմից իրականացված հարվածները, որոնք պաշտոնական աղբյուրների կողմից ներկայացվել էին որպես «ինքնապաշտպանական», արդեն ավարտված են: Ըստ CNN-ի հաղորդման՝ Իրանը հայտարարել է, որ պատասխան գործողություններ է իրականացրել ԱՄՆ-ի թիրախների դեմ տարածաշրջանում՝ այն բանից հետո, երբ ամերիկյան զինված ուժերը հարվածներ էին հասցրել Իրանին՝ ի պատասխան, ինչպես նշվում է, ամերիկյան Apache ուղղաթիռի խոցման Հորմուզի նեղուցի մոտ՝ երկուշաբթի գիշերը: CNN-ի լրագրող Իվան Ուոթսոնի փոխանցմամբ՝ Իրանը հրապարակել է տեսանյութեր, որտեղ, ըստ իրանական կողմի, երեւում են ԱՄՆ թիրախների ուղղությամբ հրթիռների արձակումներ: Իրանը հայտարարել է, որ հարվածներ է հասցրել ԱՄՆ ռազմական օբյեկտներին տարածաշրջանում: Բահրեյնում CNN-ի կողմից աշխարհագրական վերլուծությամբ հաստատված տեսանյութերում երեւում է պայծառ բռնկում ԱՄՆ բազայի մոտակայքում: Հորդանանը եւ Քուվեյթը հայտնել են, որ հաջողվել է կասեցնել որոշ հարվածներ: ԱՄՆ զինված ուժերը հայտարարել են, որ ավարտել են Իրանի ուղղությամբ իրականացված հարվածները՝ ի պատասխան ամերիկյան բանակի ուղղաթիռի խոցման: Ամերիկյան պաշտոնյան CNN-ին հայտնել է, որ ԱՄՆ վարչակազմը կարծում է՝ այս գործողությունները չեն խոչընդոտի բանակցային գործընթացին: Իրանի պետական լրատվամիջոցների տվյալներով՝ Հորմուզի նեղուցի շրջակայքում երեք ռազմավարական կետերում լսվել են պայթյուններ: Հարվածների հետեւանքով, ըստ հաղորդումների, վնասվել են երկու ջրամբարներ, ինչի արդյունքում խափանվել է տարածաշրջանի ջրամատակարարումը:

*Ա. Վ.*

## ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարել է, որ Հայաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել աննախադեպ ճնշումների եւ արտաքին միջամտության պայմաններում: ՌԻԱ Նովոստիի փոխանցմամբ՝ Զախարովան «Sputnik»-ի եթերում նշել է, որ ընտրական գործընթացը ուղեկցվել է ինչպես ընդդիմության նկատմամբ ուժեղ ճնշումներով, այնպես էլ արեւմտյան երկրների միջամտությամբ: «Ընդդիմության նկատմամբ իրականացվել է աննախադեպ ճնշում: Մի կողմից դա այն է, ինչ, իմ կարծիքով, իրականացվել է իշխանության կողմից որպես քաղաքական կոնցեպտ: Մյուս կողմից՝ Արեւմուտքի միջամտությունը եւս աննախադեպ է այս տարածաշրջանի ընտրական գործընթացների համատեքստում»,-ասել է նա:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

# ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼ

**Հայաստանի Հանրապետությունում, որտեղ տնտեսության մրցունակության, արտադրողականության եւ աշխատուժի արդյունավետության մասին խոսակցությունները չեն դադարում, Ազգային Ժողովի պատգամավոր Գեղամ Նազարյանը հանդես է եկել մի նախաձեռնությամբ, որը կարող է հերթական անգամ բորբոքել հանրային քննարկումները:**

Պատգամավորը առաջարկում է արմատապես վերափոխել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքը՝ այն ներկայացնելով որպես տարիների ընթացքում կուտակված «խառնաշփոթի» կարգավորման փորձ: Սակայն նախագծի բովանդակությունը ցույց է տալիս, որ խոսքը միայն իրավական տեխնիկայի կամ հոդվածների վերադասավորման մասին չէ: Նախագիծը նախատեսում է նոր տոների սահմանում, նոր հիշատակի օրերի ամրագրում, մարզային օրերի ներդրում, ազգային փոքրամասնությունների համար առանձին ոչ աշխատանքային օրերի սահմանում, ինչպես նաեւ Հայ առաքելական եկեղեցու տաղավար տոներին հաջորդող մեռելոց օրերը ոչ աշխատանքային դարձնել:

Առաջարկվող փոփոխությունների շարքում են Նավասարդի տոնի վերականգնումը, Հայ կինոյի օրվա սահմանումը, Մեսրոպ Մաշտոցի օրվա ընդգրկումը պետական օրացույցում եւ Երեւանի ու մարզերի առանձին տոնական օրերի ամրագրումը: Թեեւ այս նախաձեռնությունները մշակութային եւ ինքնության պահպանման տեսանկյունից կարող են դրական ընկալվել, հարց է առաջանում՝ արդյոք պետությունը պետք է այդ ամենը վերածի ոչ աշխատանքային օրերի քաղաքականության:

Հատկանշական է, որ նախագծի հիմնավորման մեջ խոսվում է սոցիալական հավասարակշռության, հանրային տրամադրությունների եւ զբոսաշրջության խթանման մասին: Սակայն բաց է մնում գլխավոր հարցը՝ ի՞նչ ազդեցություն կունենան այս փոփոխությունները տնտեսության վրա: Յուրաքանչյուր լրացուցիչ ոչ աշխատանքային օր պետական եւ մասնավոր հատվածների համար ունի իր գինը, իսկ այդ գնի մասին նախագծում մանրամասն հաշվարկներ առայժմ չեն ներկայացվում:

Արդյունքում, օրենսդրական նախաձեռնությունը կարող է ընկալվել ոչ թե պարզապես որպես տոնացույցի կարգավորում, այլ որպես Հայաստանի ոչ աշխատանքային օրերի համակարգի զգալի ընդլայնման փորձ: Իսկ թե հասարակությունն ու գործարար համայնքը որքանով են պատրաստ նման փոփոխությունների, ցույց կտա առաջիկա քննարկումը:

Մինչ այդ մեկ հարց մնում է բաց. արդյոք Հայաստանին այսօր ավելի շատ տոներ են պետք, թե՞ ավելի շատ աշխատանք:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԿԱՐՈՂ Է ԱՄԻՍՆԵՐ ՏԵՎԵԼ

ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հնարավոր համաձայնագրի կնքումը կարող է ամիսներ տեւել, սակայն հնարավոր է, որ երկու կողմերը կարողանան համաձայնության գալ մեկ շաբաթվա ընթացքում: ԱՄՆ փոխնախագահ Ջ.Դ. Վենսը այս գնահատականը տվել է CBS News-ին տված հարցազրույցում, որի մի հատվածը հեռարձակվել է երեքշաբթի օրը: «Կարծում եմ՝ համաձայնագրի կարելի է հասնել մեկ շաբաթվա ընթացքում, բայց այն կարող է նաեւ մի քանի ամիս տեւել»,-ասել է նա՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք երկու կողմերը կարող են համաձայնության գալ նոյեմբերի 3-ի միջանկյալ ընտրություններից առաջ: «Կարծում եմ՝ մենք գտնվում ենք այնպիսի դիրքում, որտեղ կարող ենք հասնել Վաշինգտոնի համար տնտեսապես շահավետ եւ իրապես Իրանի միջուկային ծրագրին վերաբերող համաձայնագրի»,-ասել է նա՝ հավելելով, որ Վաշինգտոնը հույս ունի Թեհրանի հետ երկարաժամկետ համաձայնագրի հասնելու վրա: «Կարծում եմ՝ մենք մոտ ենք այդ նպատակին հասնելուն, բայց մենք դեռ անելիքներ ունենք, եւ մենք կշարունակենք դա անել»,-հավելել է նա:

## ԱՐԱՂՉԻՆ՝ ԱՄՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հեռացեք մեր տարածաշրջանից, եթե ցանկանում եք անվնաս մնալ: Այս մասին գրել է Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին, հաղորդում է ՏԱՍՍ-ը: «Մեր զինված ուժերը անպատասխան չեն թողնի ոչ մի հարձակում կամ սպառնալիք: Հեռացեք մեր տարածաշրջանից, եթե ցանկանում եք անվնաս մնալ»,-գրել է Արաղչին: Ավելի վաղ ԱՄՆ զինված ուժերի կենտրոնական հրամանատարությունը հայտնել էր Իրանի ուղղությամբ հարվածներ հասցնելու մասին այն բանից հետո, երբ Հորմուզի նեղուցի վրա խոցվել էր ամերիկյան Apache ուղղաթիռը: Ի պատասխան՝ ԻՀՊԿ-ն հարձակվել է Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում գտնվող ամերիկյան բազաների վրա:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՄ-Ի ԵՎ ԵԱՏՄ-Ի ՄԻՋԵՎ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Հայաստանին անհրաժեշտ է արագ որոշում կայացնել Եվրամիության եւ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) միջեւ ընտրության հարցում՝ ընդգծելով, որ հարցն արդեն «սուր է դրված»: Լավրովի խոսքով՝ Հայաստանում արդեն ընդունվել է օրենք Եվրամիությանը միանալու մասին, ինչը, նրա գնահատմամբ, ստեղծում է իրավիճակ, երբ անհրաժեշտ է հստակեցնել երկրի արտաքին տնտեսական եւ քաղաքական ուղղությունը: «Հայաստանում արդեն ընդունվել է օրենք ԵՄ-ին անդամակցելու մասին, հետեւաբար հարցը արդեն սուր է դրված»,-նշել է նա: Նա հիշեցրել է նաեւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ կառավարության անդամների դիրքորոշումը՝ ընդգծելով, որ այս հարցի պարզաբանումը պետք է տեղի ունենա օպերատիվ կերպով: Լավրովը ընդգծել է, որ ԵՄ-ի եւ ԵԱՏՄ-ի կանոնները փոխադարձաբար բացառող են, հետեւաբար դրանցում միաժամանակ անդամակցությունը գործնականում անհնար է: Միաժամանակ նա նշել է, որ Հայաստանը ակտիվորեն զարգացնում է համագործակցությունը նաեւ ՆԱՏՕ-ի հետ՝ ներառյալ ռազմական ոլորտում երկխոսությունը ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ:

## ՉԻ ՀԱՆԴՈՒՐԺԻ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ չի պատրաստվում հանդուրժել Հայաստանի իշխանությունների «սպառողական» կամ կախվածության վրա հիմնված մոտեցումը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) նկատմամբ: ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան բրիֆինգի ընթացքում նշել է, որ Հայաստանի իշխանությունները փորձել են հանրությանը համոզել, թե հնարավոր է միաժամանակ օգտվել ԵԱՏՄ-ի տնտեսական առավելություններից եւ պատրաստվել Եվրամիության անդամակցությանը: «Մենք չենք պատրաստվում հանդուրժել նման սպառողական վերաբերմունք ԵԱՏՄ-ի եւ մեր գործընկերների նկատմամբ»,-ասել է Զախարովան: Նրա խոսքով՝ նման դիրքորոշումը հակասում է տնտեսական միության գործընկերային սկզբունքներին:

## ԻՐԱՎԱԿԱՆ

ԿԱ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ

# ՄԱՀԱՑԵԼ Է ՀՈՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ

**Ընտրության օրը սպանված 27-ամյա Գոռը մահացել է հոր ձեռքերում. եղել են 4 հոգով, կա կալանավորված: Միջադեպը սկսվել է այն բանից, երբ անչափահաս տղան հայհոյել է 27-ամյա Գոռի հորը:**




*Նախ՝ ամենասկզբից*

Հունիսի 7-ին ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում բժշկական կենտրոններից մեկից ահազանգ է ստացվել, որ ժամը 19:55-ին կտրած-ծակած վերքերով բուժօգնության է տեղափոխվել 27-ամյա մի երիտասարդ: Արտաշիսյան փողոց մեկնած Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնի եւ Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները պարզել են, որ, ըստ նախնական տեղեկությունների, մեքենան արագ վարելու հարցի շուրջ վիճաբանություն է տեղի ունեցել մի խումբ անձանց միջեւ, ինչի ընթացքում նրանցից մեկը դանակահարել է 27-ամյա երիտասարդին: Ոստիկանների օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ, որ դանակահարողը Երեւանի 16-ամյա բնակիչ է: Դանակահարության մեջ կասկածվող անձը եւ միջադեպի մասնակիցները հայտնաբերվել եւ ձերբակալվել են:

Դեպքից որոշ ժամանակ անց ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ բժշկական կենտրոն տեղափոխված 27-ամյա երիտասարդը մահացել է: Դեպքի հանգամանքները պարզվում են:

*«Մի կաթիլ մեղրի» պատմություն ու ողբերգական ճակատագիր*

ArmLur.am-ին միջադեպից մանրամասներ են հայտնի դարձել. 27-ամյա Գոռը հոր հետ գնացել է շինանյութի խանութ՝ գնումների, քանի որ այս ամսվա վերջ պատրաստվում էր իր հարսանիքին: Վերջիններիս իբր մեքենան արագ վարելու հետ կապված հայհոյանքներ են տվել: Հայր ու որդի կանգնել են հասկանալու համար, թե ինչու են այդքան ագրեսիվ արձագանքել իրենց մեքենա վարելու հետ կապված, որից հետո 16-ամյա տղան, որի հետ եղել են եւս 3 անձինք, հայհոյել է Գոռի հորը, եւ 16-ամյա տղան հանել է դանակը ու հարվածել 27-ամյա Գոռին: Գոռը մահացել է հոր ձեռքերում: Մեզ հայտնի դարձավ, որ Գոռը 44-օրյա պատերազմի մասնակից է եղել, ունի եւս մեկ եղբայր:

Սպանված Գոռի հարազատներից մեկն էր գրառում կատարել եւ արդարություն էր պահանջում. «Մեր Գոռը էլ չկա: Մարեցին այդ տան ճրագը... Ոճրագործի ձեռքով կյանքից զրկվեց Գոռս՝ իմ ախպերս, մի երիտասարդ, որ նոր էր սկսում ապրել: Ոչ ոք կյանք չի տվել, որ կյանք խլի: Ոչ ոք իրավունք չունի մարդու շունչը կտրելու, երազանքը կիսատ թողնելու: Գոռս նշանված էր: Մեկ ամսից պիտի հարսանիք անեինք, տունը լցնեին ուրախությամբ: Փոխարենը այսօր տունը լցվեց սգով: Նրա ձեռքը մնաց օդում՝ չհասած հարսի ձեռքին: Նրա երազած կյանքը մնաց չսկսված: Չենք չարանալու: Չարությունը նոր չարություն է ծնում: Չենք նվաստացնելու ոչ մեկին, որովհետեւ մարդկայինը կորցնելով՝ ինքներս կդառնանք նրանց նման, ովքեր խլեցին Գոռիս կյանքը»:

*Կալանավորումներ*

ՀՀ քննչական կոմիտեից ArmLur.am-ին պաշտոնապես հայտնեցին, որ դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում հանրային քրեական հետապնդում է հարուցվել երկու անձի նկատմամբ, որոնցից մեկի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով (սպանությունը՝ խուլիգանական դրդումներով), իսկ մյուսի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ եւ 12-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից սպանությունը՝ խուլիգանական դրդումներով): Նրանցից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, մյուսի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան: Նախաքննությունը շարունակվում է:

***ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

## ԿՎԵՐԱԴԱՐՁՎԻ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում նախաձեռնված ուսումնասիրությամբ պարզվել էր, որ Հայաստանի Հանրապետությանը պատկանող՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի «Մուշ» կինոթատրոնի 1218 քմ մակերեսով շենքը, 43,7 քմ մակերեսով էլեկտրական ենթակայանը՝ 0,272 հա հողամասի հետ միասին 2006 թվականի օգոստոսի 14-ին կնքված պայմանագրով ապօրինի օտարվել են ֆիզիկական անձի՝ ընդամենը 4 միլիոն 572 հազար դրամով: Ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ օտարման պահին գույքի կադաստրային արժեքը կազմել է 33 միլիոն 246 հազար 992 դրամ. այսինքն՝ վերոնշյալ գույքերը վաճառվել են կադաստրային արժեքից բազմակի ցածր գնով: Ներկայում գույքի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը 134 միլիոն 250 հազար դրամ է: Այս մասին տեղեկացնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Դատախազությունում ստացված տվյալների համաձայն՝ օտարման գործընթացում հաշվի չի առնվել նաեւ այն հանգամանքը, որ 2005 թվականի դեկտեմբերի 2-ին Մարտունու քաղաքապետը, քաղաքի բնակչության պահանջով, համայնքի ավագանու անդամների անունից դիմել էր այդ ժամանակ գործող ՀՀ վարչապետին՝ խնդրելով քաղաքի միակ կինոթատրոնի շենքը հանձնել համայնքին՝ մշակութային կյանքն ու երիտասարդության ժամանցը պատշաճ կազմակերպելու նպատակով:

Ուսումնասիրության արդյունքներով պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ներկայացված հանցանքի մասին հաղորդման հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ: Բացի այդ, Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը 2025 թվականի մարտի 25-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության եւ ֆիզիկական անձի միջեւ 2006 թվականի օգոստոսի 14-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը: Հայցադիմումով հիմնավորվել է, որ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի 66 հասցեում գտնվող հասարակական նշանակության «Մուշ» կինոթատրոնը վաճառվել է շուկայական եւ կադաստրային արժեքներից էականորեն ցածր գնով՝ խախտելով ինչպես գույքի գնահատման, այնպես էլ պետական սեփականության օտարման ժամանակ գործող օրենսդրական պահանջները: Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի հունիսի 1-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է. ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության ու քաղաքացու միջեւ 2006 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ Մարտունի քաղաքի «Մուշ» կինոթատրոնի օտարման պայմանագիրը ճանաչվել է անվավեր: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետությանը կվերադարձվեն Մարտունի քաղաքի «Մուշ» կինոթատրոնի 1218 քմ մակերեսով շենքը, 43,7 քմ մակերեսով էլեկտրական ենթակայանը եւ 0,272 հա հողամասը:

ԼՈՒՐԵՐ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողների ձեռնարկած միջոցառումների եւ բացատրական աշխատանքի շնորհիվ շարունակվում են ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնումները: Բացատրական աշխատանքի հիմքում նաեւ այն փաստն է, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնելու հերթական դեպքն է գրանցվել Համայնքային ոստիկանության Արթիկի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ: Ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ զենք-զինամթերք է թողել Արթիկ-Նոր Կյանք ճանապարհի հարակից ջրատարների մոտ: Բաժնից մեկնած օպերատիվ խումբը քաղաքացու նշած վայրում հայտնաբերել է գնդացիր, գնդացրի շղթա՝ լիցքավորված 25 փամփուշտով, լիցքավորված պահեստատուփով «Մակարով» տեսակի ատրճանակ, «Ջ-1» տեսակի մարտական նռնակ՝ պայթուցիչներով, 7,62 մմ տրամաչափի 100 փամփուշտ:

Զենք-զինամթերք կամավոր հանձնելու դեպք է գրանցվել նաեւ Համայնքային ոստիկանության Աշոցքի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում: Աշոցքի բնակիչ 31-ամյա երիտասարդը բաժին է ներկայացրել 12 մմ տրամաչափի ողորկափող որսորդական հրացան եւ 7,62 մմ տրամաչափի 67 փամփուշտ եւ հայտնել, որ դրանք պատկանել են հանգուցյալ պապին:

Բնակչության մոտ ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման, առգրավման միջոցառումներն ու կամավոր հանձնելու ուղղությամբ բացատրական աշխատանքը շարունակվում է առավել հետեւողականությամբ:

## ԾԵԾԿՌՏՈՒՔ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Հունիսի 7-ին ծեծկռտուք է տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ժամը 03:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գորիսի բաժին է դիմել Սյունիքի մարզի բնակիչ 42-ամյա Մհեր Թ.-ն եւ հայտնել, որ հարեւան Սաքոն իրեն ծեծի է ենթարկել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ոստիկանության Գորիսի բաժնի ծառայողներին Մհեր Թ.-ն հայտնել է, որ ժամը 03:30-ի սահմաններում Խնձորեսկ բնակավայրի սուպերմարկետի հարակից տարածքում համագյուղացի 30-ամյա Սարգիս Բ.-ն հանդիպել է իրեն եւ հարցրել, որ նախկին միջադեպի վերաբերյալ ինչու է հաղորդում ներկայացրել ոստիկանություն եւ մեքենայից հանելով մահակը հարվածներ է հասցրել մարմնի տարբեր հատվածներին պատճառելով մարմնական վնասվածք: Դեպքի փաստով ոստիկանության Գորիսի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի քննչական բաժին:

## ԿԱՄԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից «Վալերի ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող պանրի արտադրամասում (Լոռու մարզ, ք. Տաշիր) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները: Մասնավորապես՝

- հատակի եւ պատերի մակերեւույթների որոշ հատվածներ չեն ունեցել հարթ մակերես, չեն պահվել նորոգ վիճակում, պատրաստված չեն եղել անջրանցիկ, հեշտությամբ մաքրվող եւ ախտահանվող եւ ոչ թունավոր նյութերից,
- առաստաղի որոշ հատվածներ պատրաստված չեն եղել այնպես, որ կանխարգելվի կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը, եւ առաստաղից կամ այդպիսի մակերեւույթներից մասնիկների թափվելու հնարավորությունը:

ՍԱՏՄ-ի փոխանցմամբ՝ տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ պանրի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է: Սահմանվել է վերջնաժամկետ արձանագրված խախտումները վերացնելու համար:

● *Հանրապետությունում հունիսի 9-ից 10-ը բացահայտվել է 184 հանցագործություն, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴՌՈՒՄ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ՓԱԿՎԱԾ ՉԷ

Արցախի Հանրապետության պետնախարար Նժդեհ Իսկանդարյանը, անդրադառնալով Հայաստանում տեղի ունեցած համապետական ընտրություններին, ֆեյսբուքյան իր էջում գրել է. «Հայաստանում տեղի ունեցած ընտրությունները, ցավոք, չանցան այնպիսի պայմաններում, որոնք լիարժեք վստահություն կներշնչեին հասարակությանը: Ընտրական գործընթացը ուղեկցվեց վարչական ճնշումների, ընտրախախտումների, քաղաքական հետապնդումների, ձերբակալությունների եւ վախի մթնոլորտի մասին բազմաթիվ ահազանգերով: Միեւնույն ժամանակ, այս ընտրություններն ընդգծեցին եւս մեկ կարեւոր խնդիր. տասնյակ հազարավոր արցախցիներ փաստացի զրկված էին ընտրություններին մասնակցելու հնարավորությունից: Ավելի քան 50 հազար արցախցիներ, որոնք ունեն նույն կապույտ անձնագրերը եւ շարունակում են ապրել Հայաստանի Հանրապետությունում, չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը՝ իրավական կարգավորումների հետեւանքով: Սակայն անկախ ընտրությունների արդյունքներից եւ նրանից, թե ով է ձեւավորելու իշխանությունը, Արցախի հարցը եւ արցախցիների իրավունքների պաշտպանության հարցը փակված չեն եւ չեն կարող փակված համարվել: Տեղահանված ժողովրդի հավաքական իրավունքները, անվտանգ ու արժանապատիվ կյանքի, հայրենիք վերադառնալու եւ սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքները շարունակում են մնալ օրակարգային: Հետեւաբար, Արցախի հարցի նկատմամբ հետեւողականությունը պետք է լինի ոչ միայն իշխանությունների, այլեւ քաղաքական բոլոր ուժերի, այդ թվում՝ ընդդիմության պատասխանատվության շրջանակում: Արցախի հարցը չի կարող դառնալ ընտրություններից ընտրություններ հիշվող թեմա. այն պահանջում է մշտական եւ հետեւողական աշխատանք:

Միաժամանակ, մենք պետք է շարունակենք քննարկել եւ ձեւավորել այն մեխանիզմները, որոնք կապահովեն արցախահայության ինքնակազմակերպվածությունն ու ներկայացվածությունը: Արցախի պետական ինստիտուտների պահպանման եւ ամբողջացման հարցը շարունակում է մնալ կարեւոր: Արցախի ժողովրդի համար պետք է հստակ լինի, որ իրենց հավաքական կամքն ու ներկայացվածությունը կարող են արտահայտվել նաեւ կազմակերպված քաղաքական եւ ինստիտուցիոնալ ձեւերով, ներառյալ ապագայում համապատասխան ընտրական գործընթացների անցկացումը:

Արցախի ժողովրդի պայքարը չի ավարտվել: Այն շարունակվում է՝ հանուն իրավունքների, արժանապատվության եւ արդարության»:

ՄՏԱՀՈԳԻՉ

## ԵԱՀԿ-Ն ԱՐՁԱՆԱԳՐԵԼ Է ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՃՆՇՈՒՄՆԵՐ

**Հունիսի 7-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գլխավորած Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը թեեւ ընդհանուր առմամբ ընտրությունները գնահատել է որպես մրցակցային եւ կազմակերպված, իր նախնական զեկույցում արձանագրել է նաեւ մի շարք լուրջ խնդիրներ, մտահոգություններ եւ բացասական երեւույթներ, որոնք, ըստ դիտորդների, ազդել են ընտրական գործընթացի որակի եւ հավասար պայմանների ապահովման վրա: ArmLur.am-ը առանձնացրել է հիմնական կետերը:**



*Քարոզարշավը եղել է խիստ բեւեռացված եւ առճակատող*

Դիտորդների գնահատմամբ՝ նախընտրական պայքարը անցել է «խաղաղություն, թե՞ պատերազմ» հակադրության շուրջ ձեւավորված խիստ բեւեռացված միջավայրում: Քարոզարշավի ընթացքում լայն տարածում են ունեցել պառակտող եւ սադրիչ հռետորաբանությունը, փոխադարձ մեղադրանքները, ինչպես նաեւ արտաքին քաղաքական ուղղության շուրջ սուր հակասությունները: Զեկույցում նշվում է, որ քաղաքական բանավեճերը հաճախ հեռացել են ծրագրային քննարկումներից եւ կենտրոնացել հակառակորդներին վարկաբեկելու վրա:

*Ընտրողների նկատմամբ ճնշումների մասին արժանահավատ հաղորդումներ*

ԵԱՀԿ դիտորդներն արձանագրել են, որ ստացել են բազմաթիվ հաղորդումներ իշխող կուսակցության հանրահավաքներին եւ միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների վրա գործադրված ճնշումների վերաբերյալ: Զեկույցում հատուկ ընդգծվում է. «ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել եւ ստացել է բազմաթիվ հաղորդումներ, որոնցից մի քանիսը գնահատել է որպես արժանահավատ, իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների նկատմամբ ճնշումների վերաբերյալ»: Ըստ դիտորդների՝ հատկապես պետական հատվածի աշխատակիցների նկատմամբ ճնշումների մասին տեղեկությունները լուրջ մտահոգություններ են առաջացրել ընտրական հավասար պայմանների տեսանկյունից:

*Սոցիալական եւ տնտեսական ծրագրերը առավելություն են տվել իշխանությանը*

ԵԱՀԿ-ն նշել է, որ ընտրություններից առաջ ներդրված կամ նախաձեռնված սոցիալական եւ տնտեսական միջոցառումները ստեղծել են լրացուցիչ առավելություն իշխանության համար: Զեկույցում ասվում է. «Այս հանգամանքը, ինչպես նաեւ վերջերս ներդրված կամ նախաձեռնված սոցիալական եւ տնտեսական միջոցառումները, առավելություն են ստեղծել իշխող կուսակցության համար եւ խաթարել են քարոզչություն իրականացնելու հավասար հնարավորությունները»:

*Ընտրակաշառքի եւ խախտումների բազմաթիվ մեղադրանքներ*

Դիտորդական առաքելությունը փաստել է, որ քարոզարշավի ընթացքում հնչել են բազմաթիվ մեղադրանքներ ընտրակաշառքների եւ այլ ընտրախախտումների վերաբերյալ: Թեեւ իրավապահ մարմինները քննություններ են սկսել, սակայն ընդդիմության ներկայացուցիչների շրջանում ձեւավորվել է օրենքի ընտրովի կիրառման ընկալում: «Քննությունները հիմնական ընդդիմադիր կուսակցությունների կողմնակիցների եւ թեկնածուների մոտ ձեւավորել են օրենքի ընտրովի կիրառման ընկալում»:

*Արտաքին միջամտության եւ ճնշումների մասին արձանագրումներ*

Զեկույցում առանձին անդրադարձ կա արտաքին ազդեցություններին: Դիտորդները նշում են, որ քարոզարշավի ընթացքում արձանագրվել է արտաքին ճնշում, որը դրսեւորվել է տնտեսական եւ անվտանգության ոլորտներում հնարավոր հետեւանքների մասին հայտարարություններով: ԵԱՀԿ-ն արձանագրել է նաեւ արտաքին աղբյուրներից եկող համակարգված ապատեղեկատվության եւ ազդեցության գործողությունների մասին մտահոգություններ:

*Արհեստական բանականությամբ ստեղծված մանիպուլյատիվ նյութեր*

Դիտորդների ուշադրության կենտրոնում է եղել նաեւ առցանց քարոզչությունը: Ըստ զեկույցի՝ «Որոշ թեկնածուներ եւ երրորդ կողմ հանդիսացող օգտատերերի հաշիվներ իրենց քաղաքական մրցակիցներին վարկաբեկելու նպատակով տարածել են արհեստական բանականությամբ ստեղծված մանիպուլյատիվ բովանդակություն»: Բացի այդ, արձանագրվել են կեղծ եւ ոչ իրական հաշիվների կողմից տարածվող ապատեղեկատվական արշավներ:

*Նախընտրական ֆինանսավորման թափանցիկության խնդիրներ*

ԵԱՀԿ դիտորդների ամենակոշտ գնահատականներից մեկը վերաբերում է նախընտրական ֆինանսավորմանը: Զեկույցում նշվում է. վերահսկողության մեխանիզմները բավարար չեն եղել, բազմաթիվ ծախսեր դուրս են մնացել հաշվետվություններից, երրորդ կողմերի քարոզչությունը պատշաճ կարգավորված չի եղել, կանխիկ նվիրատվությունների համակարգը բավարար հետագծելիություն չի ապահովել, իշխող կուսակցության քաղաքականությունը խթանող բարձրարժեք միջոցառումների կորպորատիվ հովանավորումը մտահոգություններ է առաջացրել բիզնեսի եւ քաղաքականության սերտաճման վերաբերյալ:

*Հանրային հեռուստաընկերության կողմնակալ լուսաբանում*

ԵԱՀԿ դիտորդները քննադատել են Հանրային հեռուստաընկերության աշխատանքը: Զեկույցում նշվում է. «Հանրային հեռուստաընկերությունը ... ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության»: Միաժամանակ արձանագրվել է, որ մասնավոր մի շարք լրատվամիջոցներ հակառակ ուղղությամբ՝ բացասական լույսի ներքո են ներկայացրել կառավարությանը եւ նպաստավոր լուսաբանում ապահովել ընդդիմության համար:

*Լրագրողների նկատմամբ ճնշումներ*

Դիտորդները նշել են, որ նախընտրական շրջանում լրագրողները բախվել են զրպարտության հայցերի, սպառնալիքների, բանավոր հարձակումների, մասնագիտական գործունեությանը խոչընդոտող դեպքերի: Ըստ ԵԱՀԿ-ի՝ այդ հանգամանքները բացասաբար են ազդել քաղաքական թեմաների լուսաբանման միջավայրի վրա:

*Ընտրական օրենսդրության խնդիրներ*

Զեկույցում արձանագրված են նաեւ համակարգային խնդիրներ՝ որոշ փոփոխություններ ընդունվել են ընտրությունների նշանակումից հետո, մի շարք փոփոխություններ իրականացվել են արագացված կարգով եւ առանց լայն քաղաքական համաձայնության, պահպանվել են օրենսդրական բացեր եւ երկիմաստություններ, դեռեւս չեն կատարվել ԺՀՄԻԳ-ի եւ Վենետիկի հանձնաժողովի մի շարք նախկին առաջարկություններ: Դիտորդները հատուկ նշել են, որ ընտրություններից հետո կատարված որոշ օրենսդրական փոփոխություններ հակասում են միջազգային լավագույն փորձին:

*Ընտրական իրավունքների սահմանափակումներ*

ԵԱՀԿ-ն քննադատել է նաեւ այն փաստը, որ դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված քաղաքացիները զրկված են ընտրելու իրավունքից, երկքաղաքացիների նկատմամբ պահպանվում են թեկնածու առաջադրվելու սահմանափակումներ, անհատ թեկնածուների առաջադրումը թույլատրված չէ: Ըստ դիտորդների՝ այս դրույթները չեն համապատասխանում մի շարք միջազգային չափանիշների:

*Հասանելիության խնդիրներ հաշմանդամություն ունեցող անձանց համար*

Դիտորդական առաքելությունը արձանագրել է, որ բազմաթիվ ընտրատեղամասեր շարունակում էին մնալ ոչ հասանելի հաշմանդամություն ունեցող ընտրողների համար: Ըստ ԿԸՀ տվյալների՝ լիարժեք հասանելի էր ընտրատեղամասերի միայն մոտ մեկ երրորդը:

*Ընտրության օրը եւս արձանագրվել են խնդիրներ*

Թեեւ ընտրության օրը հիմնականում գնահատվել է դրական, ԵԱՀԿ-ն արձանագրել է՝ ընտրատեղամասերի գերբեռնվածություն, ոչ պատշաճ դասավորություն, ընթացակարգային սխալներ, վստահված անձանց միջամտություններ, ձայների հաշվարկի ընթացքում առանձին անհամապատասխանություններ, 11 ընտրատարածքային հանձնաժողովներում դիտորդների հասանելիության սահմանափակում, ինչը նվազեցրել է գործընթացի թափանցիկությունը:

Ի վերջո, ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության զեկույցում արձանագրված հիմնական քննադատությունները վերաբերում են ընտրողների նկատմամբ ճնշումների մասին արժանահավատ հաղորդումներին, իշխանության համար ոչ հավասար պայմաններ ստեղծող սոցիալ-տնտեսական նախաձեռնություններին, նախընտրական ֆինանսավորման թափանցիկության պակասին, մեդիայի բեւեռացված եւ կողմնակալ աշխատանքին, լրագրողների նկատմամբ ճնշումներին, օրենսդրական բացերին, հաշմանդամություն ունեցող քաղաքացիների մասնակցության խոչընդոտներին եւ ընտրական գործընթացի որոշ փուլերում թափանցիկության սահմանափակումներին: Միեւնույն ժամանակ դիտորդները շեշտում են, որ այդ խնդիրները տեղի են ունեցել ընդհանուր առմամբ կազմակերպված ընտրական գործընթացի շրջանակում:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

● *ՀՀ-ում հունիսի 9-ից 10-ը բացահայտվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված մեքենա վարելու 69 դեպք:*

JUNIUS

## ՆՈՐ ՄՐՑԱՇԱՐ

Եթե արդեն հասցրել ես խաղալ Junius-ը Idram Junior հավելվածում, ապա գիտես՝ այստեղ կարող ես խաղալ, գիտելիք կուտակել ու մրցել: Եւ այսպես, կարճ դադարից հետո Junius-ը վերադառնում է նոր մրցաշարով, իսկ լավագույն արդյունքներ գրանցած մասնակիցներին սպասվում են Իդրամ ընկերության կողմից սահմանված արժեքավոր մրցանակներ: Junius ֆինանսական առցանց մրցաշարին կարող են մասնակցել 3-8-րդ դասարանի աշակերտները: Մրցաշարի հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կհաղթահարի 1-ից 50 բոլոր փուլերը եւ կհավաքի առավելագույն թվով բյուրեղներ: Եթե մի քանի մասնակից ունենան հավասար քանակի բյուրեղներ, հաղթող կհամարվի այն մասնակիցը, ով բոլոր փուլերը կանցնի ամենակարճ ժամանակում: Յուրաքանչյուր փուլում մասնակիցներին սպասում են ֆինանսական գրագիտության եւ մաթեմատիկայի վերաբերյալ 7 հետաքրքիր հարցեր՝ համապատասխան ընտրված տարիքային խմբին: Կարեւոր է՝ մրցանակները տրամադրվում են միայն ծնողի կողմից նույնականացված Idram Junior օգտատեր հանդիսացող հաղթող մասնակիցներին: Եթե հաղթող մասնակցի Idram Junior հաշիվը նույնականացված չէ, հաղթող կճանաչվի առավելագույն միավորներ հավաքած հաջորդ մասնակիցը, որի հաշիվը նույնականացված է: Իսկ կարգավորումներում պարտադիր է ընտրել մասնակցի դասարանին համապատասխան հարցաշարը, հակառակ դեպքում մասնակցության արդյունքները կհամարվեն անվավեր: Խաղա Junius, սովորիր խաղալով եւ շահիր հիանալի մրցանակներ: Մրցանակներ՝

3-4-րդ դասարաններ

1-ին տեղ - Samsung Galaxy Tab S10 պլանշետ

2-րդ տեղ - Fitbit Charge 6 Coral սմարթ ժամացույց

3-րդ տեղ - Yerevan Park նվեր-փաթեթ 2 հոգու համար

5-6-րդ դասարաններ

1-ին տեղ - Nintendo Switch OLED

2-րդ տեղ - ֆոտոխցիկ Instax Mini SE

3-րդ տեղ - Adidas նվեր քարտ

7-8-րդ դասարաններ

1-ին տեղ - Apple iPad 11 (2025)

2-րդ տեղ - iSpace նվեր քարտ

3-րդ տեղ - AirPods 4 ականջակալներ

Մրցանակները կհանձնվեն հաղթող մասնակիցների ծնողներին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է.

Անցնել հղումով եւ ներբեռնել հավելվածը

Նույնականացնել Idram Junior օգտատեր երեխային

Հավելվածի նեբեռնումից հետո ընտրել խաղը եւ մասնակցել մրցույթին: Մրցույթը կավարտվի 2026թ. հունիսի 22-ին: Հաջողություն ենք մաղթում բոլոր մասնակիցներին:

Idram Junior հավելվածը նախատեսված է 8-16 տարեկան օգտատերերի համար, որի միջոցով երեխաները հնարավորություն են ստանում օգտվել անկանխիկ միջոցներից, անհպում վճարումներ կատարել, խնայել եւ զարգացնել ֆինանսական գրագիտությունը, իսկ ծնողները՝ վերահսկել երեխաների ֆինանսական գործողությունները ժամանակակից եւ անվտանգ գործիքի միջոցով:

*Ընկերությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)*

TEAM TELECOM ARMENIA

Գ

# ԿԱՊԱՀՈՎԻ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**10 հունիսի, 2026թ., Երեւան. Team Telecom Armenia-ն կապահովի Firebird AI-ի արհեստական բանականության մեգանախագծի կոմունիկացիոն եւ ինտերնետ ենթակառուցվածքը՝ մագիստրալային, հաջորդ սերնդի օպտիկամանրաթելային ցանցի միջոցով:**

Firebird-ի տվյալների կենտրոնը, որն արդեն անցել է կառուցման եւ սարքավորումների տեղակայման եզրափակիչ փուլ, դառնալու է տարածաշրջանի ամենախոշոր արհեստական բանականության տվյալների կենտրոնը տարածաշրջանում: Նման մասշտաբի ենթակառուցվածքների արդյունավետ եւ անխափան աշխատանքն անհնար է պատկերացնել առանց գերհուսալի եւ բարձր թողունակությամբ կապի համակարգերի:

«Տարիների ընթացքում շարունակական ներդրումների արդյունքում Team Telecom Armenia-ն տարածաշրջանի մասշտաբով դարձել է կոմունիկացիաների եզակի հանգույց: Մենք այսօր Հայաստանից դուրս 4 ուղղությամբ դիվերսիֆիկացված կապուղիներ ունենք, ինչը լիարժեքորեն համապատասխանում է դատա կենտրոնների կառուցման համար միջազգային չափանիշներին: Team-ի ենթակառուցվածքը դառնում է մեգանախագծի թվային ողնաշարը՝ Հայաստանում գործարկվող ԱԲ գործարանը կապելով համաշխարհային թվային էկոհամակարգի հետ եւ ապահովելով տվյալների արագ, անվտանգ եւ անխափան փոխանցում»,-ԱԲ կենտրոնի տարածքում կատարած առաջին շրջայցի ընթացքում նշել է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրենի տեղակալ Արամ Բարսեղյանը:

Team Telecom Armenia-ն նախագծի համար ապահովում է մինչեւ 1 Տերաբիթ/վայրկյան թողունակությամբ կապ՝ պահանջարկի աճին համընթաց հետագա ընդլայնման զգալի հնարավորությամբ: Ընկերության հաջորդ սերնդի օպտիկամանրաթելային ցանցը հնարավորություն է տալիս սպասարկելու արհեստական բանականության եւ բարձր արտադրողականության հաշվարկների ոլորտի ամենապահանջկոտ ենթակառուցվածքները՝ ապահովելով տվյալների գերարագ փոխանցում եւ միջազգային կապուղիների բարձր հուսալիություն:

ԱԲ մեգակենտրոնի կառուցման աշխատանքներում ներգրավված են նաեւ Team ընկերությունների խմբի Team Construct, Team Systems եւ Team Energy ընկերությունները: Firebird-ի առաջին փուլում տվյալների կենտրոնում կգործի ավելի քան 6000 NVIDIA Blackwell GPU, որոնք կապահովեն մինչեւ 110.6 էքսաֆլոպ արհեստական բանականության հաշվարկային հզորություն: Հետագա ընդլայնման փուլերում նախատեսվում է ենթակառուցվածքի բազմակի աճ, ինչի համար կարեւոր նշանակություն ունի նաեւ համապատասխան հեռահաղորդակցական միջավայրի առկայությունը:

*Team ընկերությունների խմբի մասին*

Team ընկերությունների խումբը միավորում է Team Telecom Armenia, Team Pay, Team Systems, Team Solutions CJSC, Buy.am, Grand Hotel Yerevan, TMW, Northern Terroir, Team Construct, Team Energy, Team Logistics, ServiceHUB ընկերությունները՝ գործունեություն ծավալելով հեռահաղորդակցության, SS, ֆինանսական, հյուրանոցային եւ մի շարք այլ ոլորտներում:

Team-ը ձգտում է խթանել տնտեսությունը՝ առաջարկելով այնպիսի պրոդուկտներ ու ծառայություններ, որոնք հասանելի եւ կիրառելի կլինեն բոլորի համար:

ԼՈՒՐԵՐ

## ԱԶԱՏԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Հունիսի 3-ին Դիլիջան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանը որոշել է հունիսի 5-ից «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Հայկ Մնացականյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով 2026թ. փետրվարի 20-ին կնքված աշխատանքային պայմանագիրը: Որպես որոշման հիմք նշված է Հայկ Մնացականյանի դիմումը: Դիլիջանցիներն ասում են, որ Հ. Մնացականյանը լավ աշխատող էր, սակայն աղբահանությանը հատկացված ռեսուրսները, հավաքարարների աշխատավարձն անբավարար են: Դիլիջանը շարունակում է մնալ կեղտոտ քաղաք, այդ վիճակից բողոքում են Դիլիջանի բնակիչները եւ քաղաքի հյուրեր-զբոսաշրջիկները: Հիմա՝ ամռանը, քաղաքում աղբահանությունը վատ է կատարվում: Դիլիջան համայնքի աղբավայրը գտնվում է միջպետական ավտոճանապարհի եզրին, ցանկապատված չէ, այնտեղ դիլիջանցիների կովեր են արածում՝ սնվելով թունավոր նյութերով: Աղբավայրում հաճախ հրդեհներ են լինում, ծուխը պատում է միջպետական ավտոճանապարհը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

## ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ակբա բանկը Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով մինչեւ հուլիսի 31-ը ներառյալ ներկայացնում է բիզնեսի ֆինանսավորման հատուկ առաջարկներ:

*Ֆինանսավորման չափը եւ նպատակը*

ՓՄՁ-ները կարող են ֆինանսավորում ստանալ ներդրումների, գործող բիզնեսի ընդլայնման եւ նոր նախագծերի իրականացման նպատակով:

ՀՀ դրամով՝ 30 մլն-ից մինչեւ 500 մլն դրամ

ԱՄՆ դոլարով՝ 75 հազարից մինչեւ 1.2 մլն ԱՄՆ դոլար

*Ժամկետ եւ արտոնյալ շրջան*

Հիմնական միջոցների համար՝ 36-84 ամիս (մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 3-24 ամիս)

Շրջանառու միջոցների համար՝ 12-60 ամիս (մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 3 ամիս):

*Տոկոսադրույք՝*

ՀՀ դրամի դեպքում՝

30-100 մլն դրամ՝ 12.5% 100-500 մլն դրամ՝ 11.5%

ԱՄՆ դոլարի դեպքում՝

75-250 հազար ԱՄՆ դոլար՝ 8.8% 250 հազարից մինչեւ 1.2 մլն ԱՄՆ դոլար՝ 7.9%

Տրամադրման միջնորդավճար՝ 0.5%:

Ակբա բանկը բիզնեսներին առաջարկում է նաեւ վերաֆինանսավորման հատուկ պայմաններ.

Ֆինանսավորման ծավալն ու տոկոսադրույքները՝ համաձայն սանդղակի.

Մարման ժամկետ՝ 18-84 ամիս:

Տրամադրման միջնորդավճար՝ 0%:

*Լրացուցիչ առավելություն*

ՓՄՁ-ները կարող են օգտվել վերոնշյալ առաջարկներից ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միաժամանակ:

*Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)*

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

# ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է «ՓԻԹ» ԱԶԳԱՆՈՒՆԻՑ

**Անջելինա Ջոլիի եւ Բրեդ Փիթի դուստրը՝ Զահարան, պաշտոնապես դիմել է դատարան՝ իր ազգանունից «Փիթ» մասը հեռացնելու համար: ԱՄՆ Կալիֆոռնիայի գերագույն դատարան ներկայացված փաստաթղթերի համաձայն՝ 21-ամյա Զահարան դեռեւս ապրիլի 28-ին միջնորդություն է ներկայացրել անվան փոփոխության վերաբերյալ: Այս մասին առաջինը հայտնել է In Touch-ը, իսկ ավելի ուշ տեղեկությունը հաստատել է նաեւ PEOPLE-ը:**

Զահարայի դիմումը ներկայացվել է ընդամենը մի քանի օր անց այն բանից հետո, երբ նրա եղբայրը՝ Մեդոքս Ջոլին, նույնպես դիմել էր իր ազգանունից «-Փիթ» մասը հեռացնելու համար: Նրանց ծնողները բաժանվել էին դեռ 2016 թվականին, իսկ ամուսնալուծության գործընթացը պաշտոնապես ավարտվել է 2024 թվականի դեկտեմբերին: Անջելինա Ջոլին եւ Բրեդ Փիթը միասին ունեն վեց երեխա՝ Մեդոքսը, Փաքսը, Զահարան, Շայլոն եւ երկվորյակներ Նոքսն ու Վիվիենը: Զահարան ընտանիքի արդեն երրորդ երեխան է, ով իրավական կարգով ցանկանում է հրաժարվել հոր ազգանունից: Ավելի վաղ նույն քայլն էր արել նաեւ Շայլոն, որը ներկայումս օգտագործում է միայն «Ջոլի» ազգանունը: Զահարան վերջին ամիսներին մի քանի անգամ ակնարկել էր անվան փոփոխության մասին: Մայիսի 17-ին, երբ նա ավարտում էր Սփելման քոլեջը, ավարտական ծրագրում նրա անունը նշված էր որպես «Զահարա Մարլի Ջոլի-Փիթ», սակայն բեմ բարձրանալիս նրան ներկայացրել էին որպես «Զահարա Մարլի Ջոլի»:

Նույն կերպ, 2024 թվականին հրապարակված տեսանյութում, որտեղ Զահարան անդամակցում էր «Ալֆա Կապպա Ալֆա» քույրությանը, նա ինքն իրեն ներկայացրել էր որպես «Զահարա Մարլի Ջոլի»: Մինչդեռ ընտանիքին մոտ աղբյուրը PEOPLE-ին հայտնել է, որ Անջելինա Ջոլին շարունակում է շատ սերտ հարաբերություններ պահպանել դստեր հետ եւ ակտիվորեն մասնակցում է նրա կյանքի կարեւոր իրադարձություններին:

«Անջելինան ներկա է եղել գրեթե բոլոր կարեւոր պահերին՝ համալսարան ընդունվելուց մինչեւ ավարտական արարողություն: Նա մշտապես աջակցել է Զահարային եւ ցանկանում էր, որ նրա ուսանողական տարիները լինեն լավագույնը հնարավորից»,-նշել է աղբյուրը: Մեկ այլ աղբյուրի փոխանցմամբ՝ Բրեդ Փիթն այսօր գրեթե կապ չունի իր չափահաս երեխաների հետ, մինչդեռ անչափահաս երեխաների հետ շփումները կարգավորվում են նախկին ամուսինների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությամբ: Զահարայի որոշումը հերթական նշանն է, որ Ջոլի-Փիթ ընտանիքի երեխաներից մի քանիսը նախընտրում են իրենց ինքնությունը կապել միայն մոր ազգանվան հետ:

ՄԱՐԶԱԿԱՆ

# ԿՐԿԻՆ ԿԳԼԽԱՎՈՐԻ

Պորտուգալական «Բենֆիկան» պաշտոնապես հայտարարել է գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուի հեռանալու եւ Մադրիդի «Ռեալ» տեղափոխվելու մասին: Լիսաբոնյան ակումբի ղեկին պորտուգալացի մասնագետին կփոխարինի անգլիական «Ֆուլհեմի» նախկին մարզիչ Մարկու Սիլվան, հայտնում է armsport-ը:

««Բենֆիկան» տեղեկացնում է, որ Մադրիդի «Ռեալը» պաշտոնապես հայտնել է Ժոզե Մոուրինյուին 15 միլիոն եվրոյի դիմաց հրավիրելու մտադրության մասին, ընդ որում՝ մարզիչը տվել է իր համաձայնությունը: Շնորհակալություն, Ժոզե Մոուրինյու»,- ասված է պորտուգալական ակումբի տարածած հաղորդագրության մեջ: Արքայական ակումբը 63-ամյա մասնագետի պայմանագրի խզման համար «-Բենֆիկային» կվճարի 15 միլիոն եվրո հրաժարագին: Նշենք, որ Մոուրինյուն պորտուգալական ակումբը գլխավորում էր 2025 թվականի սեպտեմբերից:

Ավելի վաղ «Ռեալի» վերընտրված նախագահ Ֆլորենտինո Պերեսը հաստատել էր Մոուրինյուի վերադարձը թիմ: Պորտուգալացին Մադրիդի «Ռեալը» գլխավորել է նաեւ 2010-ից 2013 թվականներին՝ նվաճելով Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը, երկրի Գավաթն ու Սուպերգավաթը:

Ժոզե Մոուրինյուի հեռանալուց հետո «Բենֆիկայի» նոր գլխավոր մարզիչ կնշանակվի Մարկու Սիլվան: Ակումբի

մամուլի ծառայության համաձայն՝ 48-ամյա մասնագետի հետ ձեռք է բերվել երկու տարվա պայմանագրի շուրջ համաձայնություն՝ եւս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Սիլվան 2021 թվականից գլխավորում էր անգլիական «Ֆուլհեմը» եւ կարողացել էր թիմին Չեմպիոնշիփից դուրս բերել Պրեմիեր լիգա: Հունիսի 2-ին հայտնի էր դարձել, որ նա որոշել է հեռանալ լոնդոնյան ակումբից՝ հայրենիք վերադառնալու եւ «Բենֆիկան» գլխավորելու նպատակով:

# ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Մադրիդի «Ռեալը» պաշտոնապես հայտարարել է, որ 150 միլիոն եվրո է առաջարկել համաքաղաքային «Ատլետիկոյին»՝ արգենտինացի հարձակվող Խուլիան Ալվարեսի տրանսֆերային իրավունքները ձեռք բերելու համար, սակայն մերժում է ստացել: «Արքայական» ակումբի տարածած պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում է, որ առաջարկն արվել է տնօրենների խորհրդի նիստի արդյունքներով, գրում է armsport-ը:

«Ուսումնասիրելով եւ գնահատելով երկու ակումբների միջեւ առկա լավ հարաբերությունների շրջանակում արված առաջարկը՝ «Ատլետիկոն» շնորհակալություն է հայտնել եւ մերժել այն՝ վկայակոչելով ֆուտբոլիստի պայմանագրով սահմանված հրաժարագնի չափը»,- նշված է «Ռեալի» հայտարարության մեջ:

Հատկանշական է, որ դեռ անցած շաբաթ «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը հայտարարել էր, թե երեքշաբթի՝ հունիսի 9-ին, 150 մլն եվրոյի առաջարկ է անելու անունը գաղտնի պահվող ֆուտբոլիստի համար: Սակայն գործարքը տեղի չի ունեցել խիստ ֆինանսական տարբերության պատճառով. Ալվարեսի տրանսֆերային հրաժարագինը կազմում է 500 մլն եվրո:

«Ռեալի» հայտարարությունն անարձագանք չի մնացել «Ատլետիկոյի» կողմից: X սոցիալական ցանցի իր էջում «մատրասնիկները» «սերուցքայինների»՝ Ալվարեսին գնելու անհաջող փորձին արձագանքել են բավականին յուրօրինակ կերպով՝ հրապարակելով միայն հինգ ծիծաղող էմոջիներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

# «ԱՐԺԱՆԻ ԷԻՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԻ»

Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» ստադիոնում կայացած Հայաստան - Մոլդովա (1:1) ընկերական հանդիպումից հետո Հայաստանի ազգային հավաքականի եզրային հարձակվող Արթուր Սերոբյանը կիսվել է իր տպավորություններով, գրում է armsport-ը: 22-ամյա ֆուտբոլիստը, որն այս խաղի 89-րդ րոպեին դարձավ գոլի հեղինակ եւ բացեց հաշիվը, խփեց իր առաջին գնդակը ազգային ընտրանու կազմում: Անդրադառնալով խաղի արդյունքին ու ձեռքից բաց թողած հաղթանակին՝ Սերոբյանը նշել է. «Շատ ուրախ եմ հավաքականի կազմում երկար սպասված առաջին գոլս հեղինակելու համար, սակայն միեւնույն ժամանակ տխուր եմ, քանի որ չկարողացանք հաղթել: Մենք իսկապես արժանի էինք այսօրվա հաղթանակին: Ճիշտ է, բազմաթիվ գոլային պահեր ունեինք, որոնք պարտավոր էինք իրացնել, եւ, ցավոք, ոչ պարտադիր գոլ բաց թողեցինք: Քանի որ սա ընկերական հանդիպում էր, պետք է համապատասխան դասեր քաղենք եւ առաջ շարժվենք»:

Հիշեցնենք, որ Եղիշե Մելիքյանի գլխավորած թիմը լարված պայքարում բավարարվեց ոչ-ոքի արդյունքով: Թեեւ մեր ընտրանին երկրորդ խաղակեսում տիրում էր նախաձեռնությանը, եւ «Արարատ-Արմենիայի» ֆուտբոլիստների՝ Կամո Հովհաննիսյանի ու Արթուր Սերոբյանի արդյունավետ համագործակցության շնորհիվ առաջ անցավ հաշվի մեջ, հայ ֆուտբոլիստները չկարողացան պահպանել հաղթական արդյունքը: Հանդիպման ավելացված ժամանակում մոլդովական «Պետրոկուբի» կիսապաշտպան Վիկտոր Բոգայչյուկը վերականգնեց հավասարությունը: Օրեր առաջ՝ հունիսի 6-ին, մեր հավաքականը նույն՝ 1:1 հաշվով էր ավարտել նաեւ Ղազախստանի դեմ ընկերական հանդիպումը: Ազգային հավաքականն իր հաջորդ պաշտոնական հանդիպումը կանցկացնի արդեն աշնանը. սեպտեմբերի 25-ին մեր թիմը Ազգերի լիգայի խաղարկության առաջին տուրի շրջանակներում սեփական հարկի տակ կընդունի Լատվիայի ընտրանուն:

# ՀԱՅԱՑՔԸ ԴԵՊԻ ԳԵՐՄԱՆԻԱ

Մադրիդի «Ռեալը» դիտարկում է Դորտմունդի «Բորուսիայի» պաշտպան Նիկո Շլոտերբեկին ձեռք բերելու հնարավորությունը: Այս մասին հայտնում է գերմանական Bild պարբերականը, գրում է armsport-ը:Աղբյուրի համաձայն՝ 26-ամյա ֆուտբոլիստի գործող պայմանագրով նախատեսված հրաժարագինը կազմում է 50-60 միլիոն եվրո: Նշվում է, որ գերմանացի պաշտպանի խաղը համակրում է Ժոզե Մոուրինյուն, ով, ըստ շրջանառվող լուրերի, դառնալու է մադրիդյան ակումբի նոր գլխավոր մարզիչը: Շլոտերբեկն ինքը նույնպես դեմ չէ կարիերան Իսպանիայում շարունակելուն: Հիշեցնենք, որ Շլոտերբեկը «Բորուսիայի» գույները պաշտպանում է 2022 թվականից: Նախորդ մրցաշրջանում նա բոլոր մրցաշարերում մասնակցել է 37 հանդիպման՝ դառնալով 5 գոլի եւ 2 գոլային փոխանցման հեղինակ:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 14-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Կամակոր ճուտիկը» ներկայացումը:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք կարող է գրանցվել հեղինակային իրավունքը:**

*Հակոբ Գինոսյան, 51 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ինչպես արդեն նշել ենք հեղինակային իրավունքի պահպանությունը տրամադրվում է ավտոմատ կերպով եւ կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից եւ որեւէ այլ գործողության կատարումից:

Ուստի Մտավոր սեփականության գործակալությունը չի իրականացնում հեղինակային իրավունքի օբյեկտների գրանցման գործառույթ:

Սակայն, հեղինակային իրավունք եւ հարակից իրավունքներ կրողների իրավունքների ապահովման նպատակով գործում են գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ: Նման կազմակերպությունները ստեղծվում են ուղղակիորեն հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների տերերի կողմից եւ գործում են ստացված լիազորությունների շրջանակներում («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 63-64-րդ հոդվածներ)

*Մտավոր սեփականության գրասենյակ*

*Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:**

*Գագիկ Սիմոնյան, 48 տարեկան*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն 24.11.2010 թ. հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,

2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը, բացառությամբ պետական հաստատության 1-ին դասարան ընդունվելու դեպքի:

3) լուսանկար՝ 3x4 չափսի, «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում», սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4) տեղեկանք՝ տրված Միասնական սոցիալական ծառայություն տրամադրող կենտրոնի կողմից՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների վերաբերյալ՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության), եթե տեղեկատվական համակարգերի միջոցով հնարավոր չէ ինքնաշխատ եղանակով տվյալների փոխանակում,

5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

6) սույն կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից:

*ԿԳՄՍ*

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի*

Արտակարգ իրավիճակ Ծաղկաձորում. Հրազդան գետը ափերից դուրս է եկել ու ողողել մի քանի փողոցներ:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| Շիրակ | + 4 + 8<br>+ 17 + 22 |
| Կոտայքի լեռներ | + 4 + 7<br>+ 17 + 21 |
| Կոտայքի նախալեռներ | + 12 + 15<br>+ 23 + 26 |
| Գեղարքունիք | + 5 + 9<br>+ 16 + 21 |
| Լոռի | + 6 + 10<br>+ 20 + 24 |
| Տավուշ | + 6 + 9<br>+ 21 + 24 |
| Արագածոտնի լեռներ | + 3 + 6<br>+ 17 + 21 |
| Արագածոտնի նախալեռներ | + 10 + 15<br>+ 23 + 28 |

| | | |
|---|---|---|
| Արարատ | + 13 + 16<br>+ 26 + 29 |
| Արմավիր | + 14 + 17<br>+ 27 + 30 |
| Վայոց ձորի լեռներ | + 5 + 8<br>+ 17 + 21 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 14 + 18<br>+ 27 + 30 |
| Սյունիքի լեռներ | + 6 + 9<br>+ 16 + 19 |
| Սյունիքի նախալեռներ | + 9 + 14<br>+ 20 + 24 |
| Սյունիքի հովիտներ | + 15 + 18<br>+ 26 + 30 |
| Երեւան | + 16 + 18<br>+ 28 + 30 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.06.2026**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*